

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի
26/11/2010թ թիվ 28-Լ որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
(վերջին փոփոխությունը գրանցված է)
ՀՀ կենտրոնական բանկում

Փոփոխված է 25/03/2011թ թիվ 34-Լ որոշմամբ

«18» ապրիլի 2011թ
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

----- Արթուր Ջավադյան

----- Անդրանիկ Նորեկյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-015

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ»
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ**

(ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՏՈՒԺՈՂԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ
ԳՈՒՅՔԻ ՈՉՆՉԱՑՄԱՆ (80% ԵՎ ԱՎԵԼԻ ՎՆԱՍԻ) ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ
ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ)

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵ Ր

1. Գույքի մնացորդային արժեքների հաշվարկը Բյուրոյի կողմից որակավորված փորձագետի կողմից կիրառվում է այն դեպքում, եթե դրա վերանորոգումը տեխնիկապես անհնարին է կամ տնտեսապես չհիմնավորված (վերանորոգման ծախսերը կգերազանցեն նախքան պատահարը գույքի արժեքի 80 տոկոսը) :

2. Սույն կանոնները սահմանում են գույքի պիտանի մասերի հատկանիշները և գույքի մնացորդային արժեքի հաշվարկման մեթոդաբանությունը:

ԳԼՈՒԽ 2

ԳՈՒՅՔԻ ՊԻՏԱՆԻ ՀԱՄԱՐՎՈՂ ՄԱՍԵՐԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

3. Գույքի մնացորդային արժեքների գնահատման համար առանձնացվում են ապահովագրական պատահարից հետո վնասված գույքի՝ հետագա օգտագործման համար պիտանի դետալները, հանգույցները, ագրեգատները: Սույն կանոններով պիտանի է համարվում այն մասը (դետալը, հանգույցը, ագրեգատը), որը՝

- 1) գույքից տեխնիկապես հնարավոր է անվնաս առանձնացնել,
- 2) տվյալ դետալների վաճառքի երկրորդային շուկայում ունի պահանջարկ,
- 3) չունի վնասվածք, որը կազդի դրա ամբողջականության և ապրանքային տեսքի վրա,
- 4) շահագործման ենթակա է,
- 5) կառուցվածքով, ամբողջականությամբ և չափերով չի փոխվել արտադրողի կողմից նախատեսված վիճակից,
- 6) նախկինում չի վերանորոգվել,
- 7) գտնվում է տեխնիկական շահագործման կանոններով թույլատրելի մաշվածությունը չգերազանցող վիճակում:

ԳԼՈՒԽ 3

ԳՈՒՅՔԻ ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

4. Ոչնչացված գույքի մնացորդային արժեքի հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$U_{\text{մ}} = (1 - Q_{\text{ա}}) \times U_{\text{ա}} \times \sum_{i=1}^{17} Z_i$$

որտեղ՝

$U_{\text{մ}}$ – գույքի մնացորդային արժեքն է՝ ՀՀ դրամով,

$Q_{\text{ա}}$ – գործակից է, որն արտացոլում է գույքի մասերի (դետալ, հանգույց, ագրեգատ) ապամոնտաժման, փորձարկման, պահպանման և վաճառքի հետ կապված ծախսերի մեծությունը ($Q_{\text{ա}}=0.65$),

$U_{\text{ա}}$ – մինչև վնասվելը գույքի շուկայական արժեքն է՝ ՀՀ դրամով,

Հի – գույքի պիտանի մասերի (դետալ, հանգույց, ագրեգատ) շուկայական արժեքի տեսակարար կշիռն է մինչև վնասվելը գույքի շուկայական արժեքի նկատմամբ, որոնց հստակ չափերը աղյուսակ 1-ում նշված առավելագույն շեմի շրջանակներում վնասվածության աստիճանից ելնելով ինքնուրույնաբար որոշում է Բյուրոյի կողմից որակավորված և Բյուրոյում գրանցված պայմանագրի հիման վրա գործող այն փորձագետը, որն ունի ավտոտրանսպորտային միջոցին պատճառված վնասի գնահատման իրավունք: Ավտոտրանսպորտային միջոցից բացի այլ գույքի մաս կազմող հանգույցների, ագրեգատների կամ դետալների տեսակարար կշռի չափերը ինքնուրույնաբար որոշում է Բյուրոյի կողմից որակավորված և Բյուրոյում գրանցված պայմանագրի հիման վրա գործող այն փորձագետը, որն ունի տվյալ տիպի գույքին պատճառված վնասի գնահատման իրավունք,

ի – գույքի մասերն են (դետալ, հանգույց, ագրեգատ), որոնց տեսակները ավտոտրանսպորտային միջոցների դեպքում սահմանված են աղյուսակ 1-ով, իսկ այլ գույքի դեպքում ինքնուրույնաբար որոշվում են Բյուրոյի կողմից որակավորված և Բյուրոյում գրանցված պայմանագրի հիման վրա գործող այն փորձագետի կողմից, որն ունի տվյալ տիպի գույքին պատճառված վնասի գնահատման իրավունք:

5. Սույն կանոնների 4-րդ կետով սահմանված մեթոդաբանության արդյունքում ստացված մնացորդային արժեքը (դրա հաշվարկում մասնակցած դետալը, հանգույցը կամ ագրեգատը) կարող է փոխարինվել ավելի բարձր գնով, որով տվյալ դետալը, հանգույցը կամ ագրեգատը տուժողի գրավոր համաձայնությամբ ձեռք է բերվել երրորդ անձի կողմից:

ԱՂՅՈՒՍԱԿ 1: ՄԻՆՉԵՎ ՎԹԱՐՎԵԼԸ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՄԱՍԵՐԻ (ՀԱՆԳՈՒՅՑ, ԱԳՐԵԳԱՏ) ԱՐԺԵՔԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԱՐԺԵՔԻ ՆԿԱՏՄԱՍԲ

Հ/հ	Հանգույցի, ագրեգատի անվանումը	Հի (%)
1.	Սրահ	18
1.1.	Ղեկանիվ (անվտանգության բարձիկով) և ցուցիչ սարքերի վահանակ լրակազմ (անվտանգության բարձիկով)	8
1.2.	Սրահի այլ դետալներ և հանգույցներ	10
2.	Թափքի կմախք (հատակի շեմ, կանգնակներ, տանիք, դիմապակի, հետնապակի)	13
3.	Առջևի ձախ անվաթև, անվաթևի ցայտապաշտպան, լանժերոն, առջևի ձախ երկայնահեծան, արտաքին լուսավորության՝ առջևի ձախ սարքավորումներ	3
4.	Առջևի աջ անվաթև, անվաթևի ցայտապաշտպան, լանժերոն, առջևի աջ երկայնահեծան, արտաքին լուսավորության՝ առջևի աջ սարքավորումներ	3
5.	Շարժիչի ծածկոց, ջերմափոխանակիչի շրջանակ, ջերմափոխանակիչի շրջանակի կախովի տարրեր, դիմացի թափարգել	2.5
6.	Ետևի ձախ անվաթև (կողմաս), ետևի ձախ անվակամար, լուսավորության՝ ետևի ձախ սարքավորումներ	2 (2.5)*

7.	Ետևի աջ անվաթև (կողամաս), Ետևի աջ անվակամար (արկա), լուսավորության՝ Ետևի աջ սարքավորումներ	2 (2.5)*
8.	Բեռնախցիկի ծածկոց (Ետևի դուռ), բեռնախցիկի հատակ՝ իր երկայնահեծաններով, Ետևի լայնական վահանակ՝ իր կախովի դետալներով, բեռնախցիկի պաստառներ, Ետևի թափարգել	2.5
9.	Դռներ (իրենց լրակազմ դետալներով)	4 (2)*
10.	Շարժիչ (իր կցորդիչով և կախովի սարքավորումներով)	16
10.1	Շարժիչ (իր կցորդիչով՝ առանց կախովի սարքավորումների)	10
11.	Մեխանիկական (ավտոմատ) փոխանցման տուփ	7 (8)
12.	Առջևի կախոց՝ իր լրակազմ դետալներով (կայունարար, ձգաձողեր, արգելակման համակարգ, անվահեծեր, անվադողեր, լայնակահեծան)	10 (8)**
13.	Ղեկային կառավարման մեխանիզմ	2
14.	Ետևի կախոց՝ իր լրակազմ դետալներով (կայունարար, ձգաձողեր, արգելակման համակարգ, անվահեծեր, անվադողեր, լայնակահեծան, Ետևի կամրջակ)	8 (10)**
14.1.	Կախոց՝ իր լրակազմ դետալներով լիաքարշակ ավտոտրանսպորտային միջոցների համար (կայունարար, ձգաձողեր, արգելակման համակարգ, անվահեծեր, անվադողեր, լայնակահեծան, Ետևի կամրջակ)	18 (9+9)***
15.	Բաժանարար փոխանցման տուփ	2
16.	Ջերմափոխանակիչներ (ջրի, յուղի, օդորակչի և այլն), վառելիքի, ջրի բաքեր, գազերի արտանետման համակարգ	2
17.	Սույն աղյուսակի 1-16-րդ կետերում չնշված այլ մասեր (դետալ, հանգույց, ազրեգատ)	3

(...)*- երկդռնանի ավտոտրանսպորտային միջոցների համար,

(...)**- Ետևի քարշակ ավտոտրանսպորտային միջոցների համար,

(...)***- լիաքարշակ ավտոտրանսպորտային միջոցների համար աղյուսակում նշված 12-րդ և 14-րդ կետերի փոխարեն կիրառվում է միայն 14.1-րդ կետը, իսկ ոչ լիաքարշակ ավտոտրանսպորտային միջոցների համար կիրառվում են համապատասխանաբար 12-րդ և 14-րդ կետերը՝ 15-րդ կետը ընդունելով 0 %: